

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Որտե՞ղ խաչեցին Հիսուս Քրիստոսին. (0,5 միավոր)
1) Թաբոր լեռան վրա 2) Ձիթենյաց լեռան վրա
3) Գողգոթա բլրի վրա 4) Գեթսեմանիի պարտեզում
2. Քրիստոնեական եկեղեցու ո՞ր հիմնական ուղղությանն է պատկանում Եթովպական ուղղափառ եկեղեցին. (0,5 միավոր)
1) Արևելյան ուղղափառ 2) Կաթոլիկ 3) Օրթոդոքս 4) Բողոքական
3. Նշված տոներից ո՞րն է տաղավար տոն. (0,5 միավոր)
1) Ավետում 2) Տյառնընդառաջ 3) Համբարձում 4) Խաչվերաց
4. Հայոց եկեղեցում քահանայությունից ցածր քանի՞ նվիրապետական աստիճաններ կան. (0,5 միավոր)
1) 3 2) 4 3) 6 4) 9
5. Ո՞վ է «Գիրք հաստատության և արմատ հաւատոյ» աշխատության հեղինակը. (0,5 միավոր)
1) Ներսես Շնորհալին 2) Գրիգոր Տաթևացին
3) Մխիթար Գոշը 4) Վարդան Այգեկցին
6. Ո՞ր թվականին է Միսեն Ա. Երևանցին ընտրվել Ամենայն Հայոց կաթողիկոս. (0,5 միավոր)
1) 1763 թ. 2) 1771 թ. 3) 1776 թ. 4) 1780 թ.
7. Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Երբ աղոթում ես, հավաքիր խորհուրդդ, ապա սաղմոսիր»: (0,5 միավոր)
1) Գրիգոր Տաթևացին 2) Եզնիկ Կողբացին 3) Դավիթ Անհաղթը 4) Ներսես Շնորհալին
8. Ե՞րբ է ավարտվել հայոց Պատարագամատույցի ձևավորումը. (0,5 միավոր)
1) XV դարում 2) XVI դարում 3) XVII դարում 4) XVIII դարում

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Թաղեոս առաքյալի նահատակությունից հետո Ոսկյանք առանձնացել են _____ լեռներում և ճգնակյաց կյանք վարել: (1 միավոր)
10. Արմաշի դպրեվանքը հիմնվել է Արմաշ գյուղի _____ վանքում: (1 միավոր)
11. Գաղթականներին աջակցելու նպատակով 1914 թ. դեկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. -ի որոշմամբ և գլխավորությամբ ստեղծվել է _____ Էջմիածնի կոմիտեն: (1 միավոր)
12. _____ գրում է. «Աստվածապաշտ երկրի համար համարձակ մեռեք, որովհետև հենց այդ մահն Աստծու համար է».: (1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Կաթողիկոսի պատվանունը համապատասխանեցնել իր անվանը.

(1 միավոր)

- | | |
|-------------------------|----------------------|
| 1. Ներսես Ե. Աշտարակեցի | ա. Տղա |
| 2. Վազգեն Ա. Պալմյան | բ. Հայրիկ |
| 3. Մկրտիչ Ա. Խրիմյան | գ. Լուսավորիչ |
| 4. Ներսես Դ. Կլայեցի | դ. Պաշտպան հայրենյաց |
| 5. Գրիգոր Ա. Պարթև | ե. Շնորհալի |
| | զ. Շինարար |

1	
2	
3	
4	
5	

14. Խորհուրդները համապատասխանեցնել դրանց հետ կապ ունեցող իրադարձություններին.

(1 միավոր)

- | | |
|-------------------|--|
| 1) Ձեռնադրություն | |
| 2) Դրոշմ | |
| 3) Հաղորդություն | |
| 4) Մկրտություն | |
| 5) Ապաշխարություն | |
- ա) Այս խորհրդի միջոցով մարդը դառնում է քրիստոնյա, Հիսուս Քրիստոսի հետևորդ:
բ) Այս խորհրդի միջոցով անձը դառնում է հոգևորական և ստանում հոգևոր աստիճան:
գ) Այս խորհուրդը պատարագի առանցքն է:
դ) Այս խորհուրդը կատարվում է մկրտության հետ միաժամանակ:
ե) Այս խորհրդի կարևոր պայմաններն են զոջումը, խոստովանությունը, քավությունը:

1	
2	
3	
4	
5	

№ 15-17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Եվ մեր սուրբ հայրը մաքրակենցաղ էր ու սրբասուն, երկայնամիտ էր ու ողորմած: Սրա ձեռքով շատ գերիներ ազատվեցին գերիջներից, որովհետև սրա ժամանակ անհաշտ խռովություն կար պարսիկների և օսմանցիների միջև, ուստի ավար ու գերություն շատ էր լինում երկու կողմերից»:

(1 միավոր)

Ո՞ր պատմիչն է մեջբերված խոսքերի հեղինակը:

16. «Հայրենակիցնե՛ր, եղբայրնե՛ր և որդինե՛ր, հին դարերում, երբ հայոց զորքը պատրաստվում էր թշնամու դեմ գնալու, նրա հրամանատարները գալիս էին Էջմիածին՝ կաթողիկոսի մոտ՝ նրա աջը համբուրելու և օրհնությունն առնելու: Բայց այս անգամ վտանգն այնքան ահավոր է ու մեծ, ահա ես եմ Սուրբ Էջմիածնից եկել ձեր բոլորի ձեռքը համբուրելու, որ փրկենք հայրենիքը, փրկենք ձեր պատիվը, հայի պատիվը... »:

(1 միավոր)
Ո՞ւմ խոսքերն են մեջբերված այստեղ:

17. «Շահնշահ ... ելավ գնաց և հասավ Գամիրքի Կեսարիա քաղաքը: Նա դեռ վաղուց շատ էր զայրացած հույների դեմ, դրա համար ցատումնալից հարձակվեց Կեսարիայի մետրոպոլիտի վրա, որի անունը Մարկոս էր, քանզի այս չար ու պիղծ հերետիկոսը (հայերին) շատ էր անարգում»:

1) Ո՞ր պատմիչի աշխատությունից է վերը բերված հատվածը: (1 միավոր)

2) Հայոց ո՞ր արքայի մասին է պատմիչի խոսքը: (1 միավոր)

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

**18. Պատարագի վերաբերյալ բերված փաստարկներից ո՞ր երկուսն են սխալ.
(2 x 1 = 2 միավոր)**

- 1) Պատրաստությունը տեղի է ունենում եկեղեցու ավանդատան մեջ աղոթքներով և պատարագիչ քահանայի հանդերձավորմամբ:
- 2) Հավատացելոց պատարագի ժամանակ հավատացյալները Հաղորդություն են ստանում:
- 3) Երախայից պատարագը սկսվում է թափորից հետո, երբ պատարագիչ քահանան կրկին խորան է բարձրանում:
- 4) Հավատացելոց պատարագը կոչվում է նաև ճաշու պատարագ:
- 5) Հավատացելոց պատարագն ավարտվում է եկեղեցու մեջ թափորով:
- 6) Արձակումը կատարվում է գոհաբանական աղոթքից և վերջին օրհնությունից հետո:
- 7) Պատրաստության ժամանակ, խորանի առջև, պատարագիչ քահանան մեղքերի թողություն է ստանում, լվանում է ձեռքերը և բարձրանում է խորան::

**19. Բերված փաստարկներից ո՞ր երկուսն են սխալ.
(2 x 1 = 2 միավոր)**

- 1) Ս. Կյուրեղ Երուսաղեմացին գրել է. «Շնորհ տալը Աստծու գործն է. այն պահելն ու պահպանելը՝ քոնը»:
- 2) Եզնիկ Կողբացին գրել է. «Մի բան է իմանալ, թե ինչ է բարին, մի այլ բան՝ բարիք գործելը»:
- 3) Նոր Կտակարանում գրված է. «Ամեն ոք, ով մեղք է գործում, մեղքի ծառա է»:
- 4) Մխիթար Գոշը գրել է. «Չկա ոչինչ, որ կարելի չլինի բացատրել և չկա ոչինչ, որ անմատչելի լինի բանականությանը»:
- 5) Մովսես Խորենացին գրել է. «Մեր երկրում էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սխրագործություններ են կատարվել»:

№ 20
Շարադրանք (2 միավոր)

- ա. Որո՞նք են ազգին բնութագրող հիմնական հատկանիշները:
բ. Ներկայացրեք Հայոց եկեղեցու դերը հայ ազգի կազմավորման գործընթացում: